ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

«Ով չվերցնի իր խաչը և իմ ետևից չգա,
չի կարող իմ աշակերտը լինել»:
(ՂՈՒԿ. ԺԴ 27)

Դեկտեմբերի 21-ի կիրակի օրը ևս հիշատակելի էր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու համար: Սուրբ Գայանե վանքում, հընթացս մատուցվող Սուրբ և անմահ Պատարագի, ձեռամբ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի, տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն և օծում:

Նախորդ օրը, դեկտեմբերի 20-ին, Սուրբ Արգար Նախավկայի՝ ի Քրիստոս անդրանիկ հավատացյալ թագավորին մերո ոգեկոչման տոնի օրը, հավարտ երեկոյան ժամերգության, Մայր Տաճարում տեղի ունեցավ ընծայացու Լևոն սարկավագ Գըլըճյանի կոչման արարողությունը, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանները. սարկավագներ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներ, ինչպես նաև մեծաթիվ հավատացյալներ: Նաթան Սրբազանը կատարեց ընծայյալի հոգևոր իմացական պատրաստությունն ու ուղղափառ դավանության հարցի բնությունը: Առաջադրված բոլոր հարցերին դրականորեն պատասխանեց խարտավիլակ հայր սուրբը՝ Բագրատ աբեղա Գալստանյանը: Ընծայացու սարկավագը հանձն առավ՝ հավատարիմ մնալ իր ուխտին, լինել Հայաստանյայց Եկեղեցու արժանի սպասավորը:

Հաջորդ օրը Ս. Գայանե վանքում մատուցվող Ս. Պատարագին ներկա էին տեղի հոգևոր դասը, հավատացյալների հոծ բազմությունը: Օրվա պատարագիչն էր ձեռնադրող սրբազան հայրը: Մինչ Սուրբգրային ընթերցումները, ընդհատվեց մատուցվող Պատարագը, և ընծայյալը, սաղմոսների փոխասացությամբ, ծնրադիր բարձրացավ Սուրբ Խորան՝ «առ ուսս» սրբազան հոր և, դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը, վեր բարձրացրեց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման և ի նվիրումն հոգևոր կյանքի:

Ձեռնադրող Սրբազանը, Սրբալույս Մյուռոնով օծելով նորընծայի ձեռքերն ու ճակատը, նրան վերանվանեց Տ. Արգար քահանա:

Այնուհետև «Զի որ ոչ բառնայ զխաչ իւր և գայ զկնի իմ՝ ոչ կարէ իմ աշակերտ լինել» («Ով չվերցնի իր խաչը և իմ ետևից չգա, չի կարող իմ աշակերտը լինել», ՂՈՒԿ. ԺԴ 27) բնաբանով հավուր պատշաճի քարոզ խոսեց Նաթան սրբազանը՝ միաժամանակ նորաօծ քահանային հղելով իր հայրական պատգամը, ցանկանալով կարգի մեջ հաստատակամություն և շիտակ ու ժողովրդանվեր գործունեություն: «Մանր, սակայն հանձնի է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի լուծը,- իր խոսքում ասաց սրբազան հայրը,- բայց այն առավել է իմաստավորվում, երբ ամեն կրող այն տանում է մեծ գիտակցումով ու նվիրում: Մեծ Վարդապետի նշմարիտ աշակերտը կոչվելու համար, յուրաքանչյուր հոգևորական անմնացորդ պետք է իրեն նվիրաբերի հարազատ Եկեղեցուն և ժողովրդին ծառայելուն, այսինքն՝ պետք է վերցնի իր խաչը և գնա Տիրոջ ետևից»:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ